

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԷԼՅԱՆՈՐԱ ՆՈՐԱՅՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

Հոդվածը ստացվել է՝ 02.04.2021, գրախոսվել է՝ 11.05.2021

Ազգային հարստության և բնակչության եկամուտների ձևավորման ու բաշխման հարաբերությունները, ինչպես նաև այդ ոլորտում ծագող հիմնախնդիրների լուծումներն աշխարհի բոլոր երկրներում (ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող) գտնվում են կառավարությունների կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության կենտրոնում: Այդ հանգամանքը պայմանավորված է նրանով, որ երկրի տնտեսական աճի տեմպերը, դրա որակն ու արդյունավետությունը մեծապես պայմանավորված են բնակչության տարբեր խմբերի միջև եկամուտների և հարստության բաշխման համամասնություններով, որոնք էլ հիմք են հանդիսանում հասարակության ներսում սոցիալական համերաշխության և գործընկերության համար: Ավելին, հենց այս նպատակի իրագործմանն էլ պետք նպատակաուղղվեն տնտեսական քաղաքականության որոշակի գործիքներ, որոնք կապահովեն հասարակության ներսում բնակչության տարբեր խմբերի շահերի ներդաշնակությունը և բնականոն զարգացումը:

2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի Հանրապետությունում իրականացված «Թավշյա», ոչ բռնի, ժողովրդական հեղափոխության թերևս ամենահիմնական պատճառներից մեկը հանրապետությունում բնակչության եկամուտների և ազգային հարստության այնպիսի բաշխումն էր, որը հանգեցրել էր հասարակության բնեռացմանը՝ ստեղծելով հարուստ փոքրամասնություն և մեծ տեսակարար կշիռ ունեցող աղքատներ: Դեռևս Արիստոտելն է նշել, որ եթե ձեր պետության ներսում ունեք փոքրաթիվ հարուստներ և մեծաթիվ աղքատներ, ապա դուք ունեք երկու պետություն՝ հարուստների և աղքատների: Մյուս կողմից էլ՝ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցածր ցուցանիշը, աշխատանքի ու կապիտալի միջև ՀՆԱ-ի անարդար բաշխումը, բնակչության աղքատության բարձր մակարդակը (2019թ.-ի դրությամբ՝ 43.8% (ըստ նոր մեթոդաբանության աղքատության վերին գծի)¹, մինչդեռ աղքատության միջին գծի հիման վրա

¹ Ըստ վերին գծի աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին գծից՝ 53043 դրամ ամսական: Տե՛ս ՀՀ Վիճակագրական կոմիտե (2020). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական – վերլուծական զեկույց, էջ 29, 30:

հաշվարկված աղքատության մակարդակը կազմել է 26.4%-ը)¹, ինչպես նաև բազմաթիվ այլ գործոններ երրորդ հանրապետության անցած ժամանակահատվածում ձևավորել են այնպիսի տնտեսություն, որն աչքի է ընկնում հարստության ստեղծման և կուտակման ցածր արդյունավետությամբ:

Վերը շարադրվածից հետևում է, որ ՀՀ-ում առաջացել է անհրաժեշտություն՝ բարելավելու բնակչության եկամուտների ու ազգային հարստության ձևավորման և բաշխման հարաբերությունները, իսկ այդ ոլորտում իրականացվող տնտեսագիտական ուսումնասիրությունները և վերլուծությունները ձեռք են բերում գիտագործնական կարևորություն:

Յուրաքանչյուր երկրի բնակչության բարեկեցության աճը և ազգային տնտեսության զարգացումը պայմանավորված են մի շարք հանգամանքներով և նախադրյալներով, որոնք, հատկապես երկարաժամկետ հեռանկարում, կանխորոշում են սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները: Որպեսզի ապահովվի հասարակության բազմակողմանի զարգացումն ու պետության հզորացումը, անհրաժեշտ է ոչ միայն սպառման բավարար մակարդակի ձեռքբերում, այլև կուտակման բավարար նորմայի ապահովում, ինչն էլ ընկած է հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության հիմքում: Եթե չի ապահովվում վերարտադրության այս բնականոն ընթացքը, ապա հասարակությունը զրկվում է հետագա զարգացման երաշխիքներից, ինչն էլ կարող է դառնալ երկրի անվտանգության խարխիւման և պետության դեգրադացման պատճառ: Կամ, այլ կերպ ասած, անհրաժեշտ է ունենալ հեռանկարային զարգացման տեսանկյունից որոշակի ֆինանսական, նյութատեխնիկական, աշխատանքային ռեսուրսներ և բնական պաշարներ, որոնք կարող են ապահովել տնտեսական հետագա առաջընթացը: Հայաստանի Հանրապետությունում անցած տարիների ընթացքում ձևավորվել է, ըստ էության, անարդար հասարակություն, որի հետևանքով (հիմնականում բաշխման անարդյունավետ կառուցակարգերի պատճառով) նկատվում է բնակչության եկամուտների խիստ բևեռացում, աշխատավարձերի ցածր մակարդակ, հարստության կուտակում փոքրաթիվ մարդկանց (կլանների) ձեռքում, ինչն էլ հանգեցրել է բնակչության մեծ չափերով արտագաղթի և աղքատության բարձր մակարդակի: Եթե ՀՀ-ում ՀՆԱ-ի ձևավորման և բաշխման, բնակչության տարբեր խմբերի միջև եկամուտների բաշխման վերաբերյալ առկա են վիճակագրական համապատասխան տվյալներ, ապա ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից չեն հաշվարկվում և հրապարակվում ազգային հարստության ձևավորման և բաշխման վերաբերյալ տվյալներ, ինչն էլ դժվարացնում է տնտեսական այդ կարևորագույն կատեգորիայի վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացումը: Այդպիսով, բնակչության եկամուտների և հարստության արդարացի բաշխումը, աշխատանքի ու կապիտալի միջև հակասությունների վերացումը, երկրի ազգային հարստության ձևավորումը և դրա բազմապատկումը ստանում են ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև քաղաքական հնչեղություն:

¹ ՀՀ վիճակագրական կոմիտե (2020). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական - վերլուծական զեկույց, էջ 31, 33:

Ուստիև ազգային հարստության ձևավորման և բաշխման հիմնախնդիրը պետք է գտնվի տնտեսագետ-հետազոտողների ուշադրության կենտրոնում և հետապնդի հետևյալ նպատակները.

նախ՝ անհրաժեշտ է բացահայտել ազգային հարստության և բնակչության եկամուտների ձևավորման ու բաշխման միտումները ժամանակակից աշխարհում: Այդ նպատակով պետք է ուսումնասիրել բնակչության եկամուտների և հարստության աճի միտումները, հատկապես սպառման ու կուտակման համամասնությունների փոփոխման համատեքստում: Կարևոր տեղ պետք է հատկացնել տնային տնտեսությունների կողմից սպառման ուղղությունների ուսումնասիրությանը, աշխարհի տարբեր երկրներում բնակչության բացարձակ և համեմատական աղքատության պատճառների ու դրանց հետևանքների բացահայտմանը, ինչպես նաև աշխարհի տարբեր երկրների կառավարությունների կողմից բնակչության եկամուտների և հարստության ձևավորման ու բաշխման արդյունավետ համակարգերի և կառուցակարգերի մշակման, կիրառման ու դրանց արդյունավետության հիմնահարցերին:

Հաջորդ խնդիրը բնակչության եկամուտների ձևավորման և բաշխման առանձնահատկությունների ուսումնասիրությունն է Հայաստանի Հանրապետությունում: Ուսումնասիրվելու են ՀՀ-ում բնակչության եկամուտների ձևավորման և բաշխման հարաբերությունները, այդ թվում՝ կարևորելով տնային տնտեսությունների կողմից սպառման կառուցվածքի փոփոխությունները և գնահատելով այդ փոփոխությունների էությունը: Նշանակալի տեղ է հատկացվելու նաև բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրներին ու դրանց փոփոխություններին վերջին տարիների ընթացքում: Հետազոտության կարևոր մաս է կազմելու նաև բնակչության խնայողությունների ու դրանց ծավալների ավելացման, ինչպես նաև բնակչության տարբեր շերտերի միջև բաշխման ուսումնասիրությունը, այդպիսի բաշխման իրական պատկերը: Վերջին տարիների համար կարող ենք նշել, որ ՀՀ-ում տեղի է ունեցել բնակչության եկամուտների բացարձակ աճ, բնակչության մեկ շնչի հաշվով իրական սպառման միջին տարեկան աճ, ինչպես նաև բնակչության աղքատության նվազում: Պաշտոնական տվյալներով՝ բնակչության դրամական եկամուտների փաստացի բաշխումը 2008-2019 թթ., ըստ քվինտիլային խմբերի, վկայում է, որ 2019-ին 2008-ի համեմատությամբ առաջին (նվազագույն եկամուտներով) քվինտիլային (20 %) խմբի բաժինը ընդհանուր եկամուտների մեջ նվազել է 2 տոկոսային կետով՝ 2008-ի 7 %-ից 2019-ին հասնելով 5 %-ի, մինչդեռ 5-րդ (առավելագույն եկամուտներով) քվինտիլային խմբի բաժինն ավելացել է 5 տոկոսային կետով՝ 2008-ի 38 %-ից 2019-ին հասնելով 43 %-ի¹: Այսինքն՝ նշված ժամանակահատվածում հարաբերականորեն հարուստներն ավելի են հարստացել, իսկ աղքատներն ավելի են աղքատացել, ինչն էլ հասարակության ներսում սրել է և հեղափոխական իրադրության հասցրել բնակչության տարբեր

¹ Հաշվարկվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2020 թ., Եր., ՀՀ ՎԿ, էջ 132-ի, Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2012 թ., Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 104-ի տվյալների հիման վրա:

շերտերի միջև եղած հակասությունները: Ու թեև 2018-2019 թթ. նկատվել է բնակչության ցածր եկամուտներ ունեցող խմբի որոշակի բարելավում (2018–ին 2017–ի համեմատ 0.1 տոկոսային կետով, իսկ 2019–ին՝ 0.6 տոկոսային կետով), սակայն ակնհայտ է, որ ՀՀ–ում 1996-2019 թթ. ժամանակահատվածում դեռևս չի ձևավորվել միջին խավ, որը հասարակության կայունության հիմնական երաշխիքն է, քանի որ 2019 թ. տվյալներով միջին եկամուտներ ունեցող բնակչության խմբի բաժինը կազմել է 24.7 %, ինչը ցանկալի մակարդակից (55-60 %) էականորեն ցածր է: Ու թեև բնակչության ամենահարուստ խմբի բաժինը 1996-2019 թթ. ժամանակահատվածում նվազել է 17.1 տոկոսային կետով, սակայն այն շարունակում է մնալ բարձր, և այս խմբի հարաբերակցությունը բնակչության ցածր եկամուտներ ունեցող խմբին 2019–ին կազմել է 4.4 անգամ, իսկ ամենահարուստ (տասներորդ) դեցիլի հարաբերությունը ամենացածր եկամուտ ունեցող (առաջին դեցիլի) եկամուտներին կազմել է 17.4 անգամ, ինչը այդ հարաբերակցության «նորմալ» կամ թույլատրելի չափը (6-8 անգամ) գերազանցում է 2.2-ից 2.9 անգամ (աղյուսակ 1): Իսկ եթե նկատի ունենանք, որ ՀՀ–ում ստվերային տնտեսության չափը տատանվում է 40-50%-ի շրջանակներում, ապա այդ տարբերությունները զգալիորեն ավելի բարձր կլինեն, քան պաշտոնական վիճակագրության տվյալների հիման վրա հաշվարկվածները:

Աղյուսակ 1

ՀՀ բնակչության եկամուտների բաշխումն ըստ դեցիլային, ինչպես նաև ցածր, միջին և բարձր եկամուտ ունեցող խմբերի, 1996-2019 թթ.

		1996	2001	2005	2010	2015	2016	2017	2018	2019
Ամենաաղքատ	I	0.3	1.5	1.6	2.1	2.0	1.7	1.7	2.0	1.6
	II	1.3	3.0	3.2	3.5	3.6	3.3	3.6	3.5	3.7
	III	2.3	3.4	4.5	4.9	4.9	4.5	4.9	4.8	5.3
Ցածր եկամուտ ունեցողներ (I+II+III+IV/2)		5.5	10.5	12.2	13.6	13.5	12.4	13.2	13.3	13.9
	IV	3.3	5.1	5.8	6.1	6.0	5.8	6.0	5.9	6.5
	V	4.4	5.9	7.2	7.6	7.3	7.1	7.1	7.2	7.6
	VI	5.9	6.5	8.8	8.3	8.2	8.3	8.4	8.5	8.4
Միջին եկամուտ ունեցողներ (IV/2+V+VI+VII/2)		16.0	19.5	24.2	24.1	23.3	23.3	23.6	23.7	24.7
	VII	8.0	9.0	10.5	10.2	9.6	10.0	10.1	10.2	10.9
	VIII	11.3	10.6	13.0	12.3	11.7	13.0	12.5	12.2	12.6
	IX	17.4	15.6	17.0	15.8	14.7	17.5	16.4	15.3	15.6
Ամենահարուստ	X	45.8	39.4	28.4	29.1	32.2	28.8	29.3	30.4	27.8
Բարձր եկամուտ ունեցողներ (VII/2+VIII+IX+X)		78.5	70.0	63.6	62.3	63.2	64.3	63.2	63.0	61.4

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 92–ի, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2007, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 92–ի, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 106–ի, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2020, Եր., ՀՀ ՎԳ, էջ 134–ի տվյալների հիման վրա:

Հասկանալի է, որ բնակչության եկամուտների նման բաշխումը չի կարող հանրության տարբեր շերտերի միջև սոցիալական համերաշխության մթնոլորտ ստեղծել, եթե չնշենք հակառակը, իսկ դա նշանակում է, որ հանրապետությունում բնակչության տարբեր խմբերի եկամուտների ձևավորումը հիմնավորված չի եղել, և այն հետևանք է ՀՆԱ-ի ոչ արդարացի բաշխման: Այս հանգամանքը պայմանավորված է ՀՀ-ում եկամուտների ձևավորման հաշվում վարձու աշխատանքի վարձատրության մասնաբաժնի էական նվազմամբ և կապիտալի տերերի եկամուտների ավելացմամբ: Այսպես, 2019-ին 1990-ի համեմատությամբ վարձու աշխատանքի վարձատրության բաժինը համախառն ավելացված արժեքի կառուցվածքում 57.4 %-ից հասել է 37.7 %-ի, մինչդեռ կապիտալի տերերի մասնաբաժինը 31.7 %-ից ավելացել է կազմելով 60.68 % (աղյուսակ 2, 3):

Աղյուսակ 2

Եկամուտների ձևավորման կառուցվածքը ՀՀ-ում 1990-2002 թթ.,
%-ով ընդամենի նկատմամբ

	Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը	Արտադրության և ներմուծման հարկեր	Արտադրության և ներմուծման սուբսիդիաներ (-)	Տնտեսության համախառն շահույթ և համախառն խառը եկամուտներ	այդ թվում՝		Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)
					Հիմնական կապիտալի սպառում	Տնտեսության գուտ շահույթ և գուտ խառը եկամուտներ	
1990 թ.	57.4	17.8	6.9	31.7	14.9	16.8	100.0
1991 թ.	52.5	8.1	1.9	41.3	15.0	26.3	100.0
1992 թ.	38.4	9.0	0.6	53.3	16.6	36.6	100.0
1993 թ.	41.8	6.0	0.9	53.1	15.1	38.0	100.0
1994 թ.	41.5	5.8	1.1	53.9	14.8	39.1	100.0
1995 թ.	39.3	5.4	0.4	55.7	14.3	41.4	100.0
1996 թ.	39.9	6.7	0.3	53.6	15.0	38.6	100.0
1997 թ.	41.8	9.2	0.4	49.3	14.4	34.9	100.0
1998 թ.	41.3	10.2	0.1	48.7	13.6	35.0	100.0
1999 թ.	42.9	11.8	1.4	46.8	14.1	32.7	100.0
2000 թ.	42.7	11.4	0.7	46.6	14.6	32.1	100.0
2001 թ.	41.8	11.8	0.6	46.9	14.3	32.6	100.0
2002 թ.	39.5	12.0	0.6	49.1	14.9	34.2	100.0

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով:

Աղյուսակ 3

Եկամուտների ձևավորման կառուցվածքը ՀՀ-ում 2003-2019 թթ.,
%-ով ընդամենի նկատմամբ

Տարի	Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	Արտադրության այլ գուտ հարկեր	Համախառն շահույթ և համախառն խառը եկամուտ	այդ թվում՝		Համախառն ավելացված արժեք
				հիմնական կապիտալի սպառում	տնտեսության գուտ շահույթ և գուտ խառը եկամուտներ	
2003 թ.	44.29	1.82	53.89	15.44	38.45	100
2004 թ.	43.13	1.68	55.20	14.42	40.78	100

2005 թ.	43.14	1.84	55.02	13.86	41.16	100
2006 թ.	42.61	1.82	55.57	12.78	42.79	100
2007 թ.	42.43	1.61	55.96	12.78	43.18	100
2008 թ.	42.00	1.57	56.43	11.86	44.57	100
2009 թ.	42.99	1.80	55.20	12.14	43.06	100
2010 թ.	41.82	1.70	56.48	12.68	43.79	100
2011 թ.	41.12	1.59	57.29	12.01	45.28	100
2012 թ.	38.64	1.48	59.88	14.16	45.72	100
2013 թ.	38.20	1.49	60.30	14.34	45.96	100
2014 թ.	38.05	1.59	60.35	14.34	46.02	100
2015 թ.	38.47	1.41	60.12	15.47	44.65	100
2016 թ.	38.68	1.32	60.00	15.46	44.54	100
2017 թ.	38.50	1.41	60.09	14.99	45.10	100
2018 թ.	37.85	1.45	60.70	14.59	46.11	100
2019 թ.	37.70	1.62	60.68	14.30	46.38	100

Աղբյուր՝ ՀՀ ՎԳ-ի «ՀՆԱ եկամուտների ձևավորման եղանակով» (ըստ ԱՀՀ 2008-ի), «Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ ՏԳՏԴ խմբ.2 (NACE 2)» (ըստ ԱՀՀ 1993-ի), «Եկամուտների ձևավորման հաշիվը (ԵՀՀ-95 Ա17 խմբավորմամբ՝ ՏԳՏԴ (NACE 1.1.) դասակարգմամբ)» (ըստ ԱՀՀ 1993-ի), առցանց տվյալների բազաներ, <https://www.armstat.am/am/?nid=202>

Հարց է առաջանում. Կարելի⁶ է արդյոք ՀՆԱ-ն ավելի արդարացի բաշխել, որպեսզի որոշակի ներդաշնակություն լինի աշխատանքի, կապիտալի տերերի և պետության եկամուտների միջև: Այդպիսի սոցիալական քաղաքականության իրագործման պատկերը բերված է աղյուսակ 4-ում, որի տվյալները վկայում են, որ ընդամենը 10 տարվա ընթացքում (1980-1989 թթ.) հաջողվել է իրականացնել եկամուտների բաշխման հավասարակշռված և նպատակային քաղաքականություն:

Աղյուսակ 4

Խորհրդային Հայաստանի բնակչության բաժանումն ըստ մեկ շնչին ընկնող, ինչպես նաև ցածր, միջին և բարձր եկամուտ ունեցող խմբերի ամբողջական եկամտի 1980-1989 թթ.
(ըստ ընտանեկան բյուջեների ինտեգրման տվյալների)

	Բնակչության միջին տարեկան թիվը							
	հազար մարդ				տոկոսով			
	1980 թ.	1985 թ.	1988 թ.	1989 թ.	1980 թ.	1985 թ.	1988 թ.	1989 թ.
Ամբողջ բնակչությունը, այդ թվում՝ մեկ շնչին ընկնող ամբողջական եկամտով ամսում, ռուբ.	3112	3349	3479	3335	100	100	100	100
մինչև 50	450	217	120	80	14.8	6.5	3.4	2.4
50-75	891	699	513	397	28.6	20.9	14.7	11.9
75-100	760	825	746	640	24.4	24.7	21.5	19.2
Ցածր եկամուտ ունեցողներ (մինչև 50-ից - 100)	2101	1741	1379	1117	67.8	52.1	39.6	33.5
100-125	470	627	695	650	15.1	18.7	20	19.5
125-150	256	416	510	517	8.2	12.4	14.7	15.5
150-175	135	244	344	370	4.4	7.3	9.9	11.1

Միջին եկամուտ ունեցողներ (100-ից - 175)	861	1287	1549	1537	27.7	38.4	44.6	46.1
175-200	68	139	221	354	2.2	4.1	6.3	7.6
200-250	56	124	211	261	1.8	3.7	6.1	7.8
250-ից ավելի	16	58	119	166	0.5	1.7	3.4	5
Բարձր եկամուտ ունեցողներ (175-ից - 250-ից ավելի)	140	321	551	781	4.5	9.5	15.8	20.4

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1989 թվականին, վիճակագրական տարեգիրք, Եր., Հայաստան, 1991թ. էջ 39-ի տվյալներով: Տեղադրված է ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքում, հղումը՝ <https://www.armstat.am/file/doc/99507078.pdf>

Հեշտ է նկատել, որ բնակչության ցածր եկամուտներ ունեցող խմբի բաժինը 1980 թ.-ի 2101 հազ. մարդուց 1989 թ.-ին կազմել է 1117 հազ. մարդ, և դրա արդյունքում ամբողջական եկամուտների մեջ այս խմբի բաժինը 1980-ի 67.8 %-ից 1989-ին դարձել է 33.5 %, նշված ժամանակահատվածում միջին եկամուտ ունեցողների բաժինը 1980-ի 27.7 %-ից (861 հազ. մարդ) 1989-ին կազմել է 46.1 % (1537 հազ. մարդ):

Այսպիսով՝ բնակչության միջին խավը կազմում էր բնակչության մեծամասնությունը: Ու թեև ավելացել է նաև բնակչության բարձր եկամուտներ ունեցողների ինչպես թվաքանակը, այնպես էլ եկամուտների ընդհանուր ծավալում նրանց մասնաբաժինը, սակայն այն կազմել է ընդամենը եկամուտների 20.4 %-ը:

Անհրաժեշտ է նաև քննարկման առարկա դարձնել եկամուտների տարբեր խմբերում գտնվող բնակչության եկամուտների հաշվարկման (հաշվառման) գործում տեղ գտած մեթոդաբանական այն մոտեցումները, որոնք կիրառվել են ՀՀ-ում, ինչպես նաև այդպիսի մոտեցումների թերությունները: Օրինակ՝ առանձին ժամանակահատվածներում տարեկան եկամուտների վերաբերյալ հետազոտությունից բացառվել են բոլոր այն տնային տնտեսությունները, որոնց տրամադրվել է պետական օգնության, ինչպես նաև որոշակի մակարդակից բարձր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունները: Թեև 2000-ական թվականների կեսերից ի վեր անցկացված հետազոտություններում դիտավորյալ չի բացառվել որևէ խումբ, այնուամենայնիվ ընտրանքի ձևավորման առնվազն երկու թերություն մնում են. 1) քաղաքային հետազոտությունները չեն ներառում ինքնազբաղված անձանց (տնային տնտեսությունների) և գործատու տնային տնտեսությունների եկամուտների վերաբերյալ տվյալները, փոխարենը՝ հենվում են ծախսերի մասին տվյալների վրա՝ նպատակ ունենալով հաշվառել դրանց եկամուտները, և 2) գյուղական վայրերի համար իրականացված հետազոտությունները չեն ներառում գյուղական ոչ-գյուղատնտեսական տնային տնտեսությունները: Մեր գնահատմամբ՝ նշված երկու խմբերը միասին վերցրած կազմում են ՀՀ տնային տնտեսությունների շուրջ 40 տոկոսը, որոնք էլ, ըստ էության, բացառվել են տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի հետազոտություններից: Հետևաբար պաշտոնական վիճակագրությունը, որը ցույց է տալիս Ջինիի գործակցի

բարելավումը, պետք է դիտարկել և գնահատել որոշակի մոտավորությամբ:

Թեև ՀՀ վիճակագրական կոմիտեի (նախկինում՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության) կողմից բնակչության եկամուտների և ծախսերի հետազոտություններում շտկվել են ընտրանքի ձևավորման մոտեցումները, այնուամենայնիվ բնակչության եկամուտների ձևավորման և բաշխման արժանահավատությունը շարունակում է մնալ վիճահարույց: Մասնավորապես՝ անհրաժեշտ է ցածր եկամուտներ ունեցող խմբերի համար ձևավորել լրացուցիչ ընտրանք՝ ստանալու համար ավելի ներկայացուցչական տվյալներ:

Դիտարկենք նաև ազգային հարստության ձևավորման և բաշխման հարաբերությունները ՀՀ-ում: Ինչպես նշվեց, ՀՀ վիճակագրական կոմիտեն հանրապետության ազգային հարստության վերաբերյալ տվյալներ չի հաշվարկում և հրապարակում: Սա կարելի է համարել Հայաստանի Հանրապետության վիճակագրական ծառայության աշխատանքներում տեղ գտած լուրջ բացթողումներից մեկը, որը պետք է լրացնել առաջիկա 1-2 տարիների ընթացքում: Ընդ որում՝ խոսքը չի վերաբերում մի քանի տվյալների հաշվարկմանը և հրապարակմանը: Ակներև է, որ թեև Համաշխարհային բանկի կողմից ազգային հարստության հաշվարկման ու գնահատման վերաբերյալ առկա են լուրջ մեթոդաբանական նշանակության ուղեցույցներ և հետազոտություններ, սակայն դրանք կարիք ունեն տեղայնացման՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսության առանձնահատկությունները: Պետք է նաև հասկանալ, որ երկրի ազգային հարստության ցուցանիշը միայն թիվ չէ, այլ տվյալ երկրի տնտեսության պատկերը բնութագրող ամփոփ ցուցանիշ: Այն տնտեսության հետագա զարգացման «ճանապարհային քարտեզը» մշակելու ուղեցույց կարող է հանդիսանալ, իսկ ազգային հարստության ցուցանիշում, ինչպես հայելիում, արտացոլված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական գործոնները, որոնք էլ բնութագրում են երկրի տնտեսական աճի հենասյունները և պետք է դառնան տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման միջոցներն ու գործիքակազմը:

Հատկապես կարևոր է դառնում հանրապետությունում տնտեսական գործունեության այն տեսակների զարգացումը և մասշտաբների ընդլայնումը, որոնք պահանջում են ավելացված արժեքի առավելագույն մեծություն, քանի որ դրա միջոցով է ապահովվում ազգային հարստության մեծության աճը: Բացի այդ, նման եղանակով կարելի է բարելավել տնտեսության կառուցվածքը և արդյունքում ձևավորել արդյունավետ կազմ ունեցող տնտեսական համակարգ՝ այստեղից բխող բոլոր առաջադիմական կարևորություն ունեցող զարգացման գերակա ուղղություններով ու դրանց վերաբերյալ մշակված առաջնահերթ միջոցառումներով:

Կարևոր է դառնում նաև ազգային հարստության դերը սոցիալական արդար պետություն ունենալու և բնակչության տարբեր շերտերի միջև սոցիալական համերաշխություն երաշխավորելու գործում, ինչն ապահովվում է ազգային հարստության բաշխման այնպիսի սկզբունքների մշակմամբ ու կիրառմամբ, որոնց պայմաններում հաշվի է առնվում պետության, գործարար շրջանակների և սոցիալական խմբերի շահերի լավագույն գույակցումը:

Մեր ուսումնասիրության նպատակներից է նաև բնակչության եկամուտների և ազգային հարստության ձևավորման ու բաշխման արդյունավետ համակարգերի և կառուցակարգերի մշակման հիմնական ուղիների բացահայտումը Հայաստանի Հանրապետությունում:

Նշված նպատակի իրականացման համար կարևոր նշանակություն ունի երկրի հարկային համակարգը: Հայաստանի հարկային համակարգը ընդհանուր առմամբ արդյունավետ է և ունակ՝ ապահովելու եկամուտների հավաքագրումը, և գոնե, ըստ սահմանման, ապահովելու որոշակի առաջադիմականություն (պրոգրեսիվություն): Բնականաբար հարկային համակարգի առաջնային խնդիրն է եկամուտների հավաքագրումը, այլ ոչ թե դրանց վերաբաշխումը: Այնուամենայնիվ այնպիսի բարեփոխումներով, որոնք նախաձեռնվեցին և մասամբ իրականացվեցին նոր հարկային օրենսգրքով, ընտրվեցին եկամուտների հավաքագրման ու բաշխման հորիզոնական և ուղղահայաց հավասարության նպատակները, որոնց մեծ մասը, այնդուհանդերձ, վիճարկելի է: Անհրաժեշտություն է առաջացել համառոտ անդրադարձ կատարելու և գնահատական տալու ՀՀ-ում գործող տարբեր հարկատեսակներին՝ ավելացված արժեքի հարկին, եկամտային հարկին, շահութահարկին, գույքահարկին, հողի հարկին և մյուս հարկատեսակներին:

Հարկային բարեփոխումների ոլորտում քաղաքականություն մշակողների, իրականացնողների հիմնական մտահոգության տիրույթում են ներկայումս անշարժ գույքի համաչափ հարկումը և այդ նպատակով 2019 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքը (այն ուժի մեջ է մտել 2021 թվականի հունվարի 1-ից)¹, համաձայն որի՝ անշարժ գույքի հարկման բազա է հանդիսանում անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը:

ՀՀ-ում հարկային բեռը, որը չափվում է որպես հավաքագրված հարկերի հարաբերությունը ՀՆԱ-ին, համարվում է միջին ծանրության, իսկ հարկերի ընդհանուր դրույքաչափը (%-ով շահույթի նկատմամբ) կազմում է 18.5 %, ինչը տարածաշրջանի երկրներում երկրորդ լավագույն ցուցանիշն է (Վրաստանից հետո՝ 9.9 %)²: Հարկային համակարգը, սակայն, բավականին ծանրաբեռնված է անուղղակի հարկերով, և հարկերի հավաքագրումը կախվածության մեջ է այդ հարկերից: Ինչ վերաբերում է եկամտային հարկին, ապա կախվածությունը այս

¹ Տե՛ս «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019 թվականի նոյեմբերի 19-ին (ՀՕ-225-Ն): Օրենքի լրացումներով տարբերակը տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական www.arlis.am կայքում:

² Տե՛ս World Bank. 2019. Doing Business 2019 : Training for Reform. Washington, DC: World Bank. <https://openknowledge.worldbank.org/handle/10986/30438>. էջ 154, 172-ի տվյալները:

հարկատեսակից բավականին թույլ է: Հորիզոնական սանդղակով հարկման արդարությունը ակնհայտորեն չի պահպանվում, քանի որ աշխատավարձ ստացողների վերին դեցիլը, ովքեր նախկինում եկամտային հարկը վճարում էին աճողական սանդղակով, ներկայումս հարկվում են շատ ավելի ցածր տոկոսադրույքով՝ համահարթ սանդղակով: Այսպես, ամսական մինչև 150 հազ. դրամ ստացողների համար եկամտային հարկի դրույքաչափը նախկինում սահմանված էր 23 տոկոսի չափով, 150 հազարից մինչև 2 մլն դրամ ներառյալ ստացողների համար՝ 34500 դրամ՝ գումարած 150 հազ. դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը, իսկ 2 մլն և ավելի դրամ ստացողների համար՝ 552500 դրամ՝ գումարած 2 մլն դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը¹: ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածում (հոդված 150) կատարված փոփոխությամբ, որն ուժի մեջ մտավ 2020 թվականին, սահմանվեցին եկամտային հարկի հետևյալ դրույքաչափերը, որոնք կախված չեն ստացվող եկամուտների մեծությունից. 2020 թվականի հունվարի 1-ից կիրառվում է եկամտային հարկի 23 տոկոս դրույքաչափը, 2021 թվականի հունվարի 1-ից՝ 22 տոկոս, 2022 թվականի հունվարի 1-ից կիրառվի 21 տոկոս դրույքաչափը, իսկ 2023 թվականի հունվարի 1-ից՝ 20 տոկոս²:

Նշենք նաև, որ ֆինանսական գործառնություններից կապիտալի աճը ընդհանրապես չի հարկվում:

Հարստության բաշխման տեսանկյունից քննարկման են արժանի ժառանգության հարկի, ինչպես նաև պրոգրեսիվ եկամտային հարկի և այլ հարկատեսակների կիրառման հնարավորությունը Հայաստանի Հանրապետությունում:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019 թվականի նոյեմբերի 19-ին (ՀՕ-225-Ն): // [«Ansharjh gowyqi harkov harkman npatakov ansharjh gowyqi showkayakan arjheqin motarkvac' kadastrayin gnahatman kargy' sahmanelow masin» HH o'renqy', HH Azgayin jhoghovi koghmic y'ndownvel e' 2019 t'vakani noyemberi 19-in (HO'-225-N)]
2. Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2020 թ., Եր., ՀՀ

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի հոդված 150-ը (Եկամտային հարկի դրույքաչափերը), ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին (ՀՕ-165-Ն), իսկ տվյալ հոդվածը նշված խմբագրությամբ գործել է մինչև 2020 թվականի հունվարի 1-ը:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019 թվականի հունիսի 25-ին, ՀՕ-68-Ն:

- ՎԿ, 621 էջ: // [Hayastani Hanrapetowt'yan vitwakagrakan taregirq 2020 t', Er., HH VK, 621 e'j]
3. Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2012 թ., Եր., ՀՀ ԱՎԾ, 595 էջ: // [Hayastani Hanrapetowt'yan vitwakagrakan taregirq 2012 t', Er., HH AVC', 595 e'j]
 4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, Եր., ՀՀ ԱՎԾ, 549 էջ // [Hayastani vitwakagrakan taregirq 2004, Er., HH AVC', 549e'j]
 5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2007, Եր., ՀՀ ԱՎԾ, 549 էջ // [Hayastani vitwakagrakan taregirq 2007, Er., HH AVC', 549e'j]
 6. Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1989 թվականին, վիճակագրական տարեգիրք, Եր., Հայաստան, 1991թ. 242 էջ: // [Haykakan XSH jhoghovrdakan tntesowt'yowny' 1989 t'vakanin, vitwakagrakan taregirq, Er., Hayastan, 1991t'. 242 e'j:]
 7. ՀՀ վիճակագրական կոմիտեի «ՀՆԱ եկամուտների ձևավորման եղանակով» (ըստ ԱՀՀ 2008-ի) առցանց տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=202> // [HH Vitwakagrakan komitei «HNA ekamowtneri d'&avorman eghanakov» (y'st AHH 2008-i) ar'canc tvyalneri baza, <https://www.armstat.am/am/?nid=202>]
 8. ՀՀ վիճակագրական կոմիտեի «Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ ՏԳՏՀԴ խմբ.2 (NACE 2)» (ըստ ԱՀՀ 1993-ի) առցանց տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=202> // [HH Vitwakagrakan komitei «Ekamowtneri d'&avorman hashivn y'st TGTHD xmb.2 (NACE 2)» (y'st AHH 1993-i) ar'canc tvyalneri baza, <https://www.armstat.am/am/?nid=202>]
 9. ՀՀ վիճակագրական կոմիտեի «Եկամուտների ձևավորման հաշիվը (ԵՀՀ-95 Ա17 խմբավորմամբ՝ ՏԳՏՀԴ (NACE 1.1.) դասակարգմամբ)» (ըստ ԱՀՀ 1993-ի), առցանց տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=202> // [HH Vitwakagrakan komitei «Ekamowtneri d'&avorman hashivy' (EHH-95 A17 xmbavormamb՝ TGTHD (NACE 1.1.) dasakargmamb)» (y'st AHH 1993-i), ar'canc tvyalneri baza, <https://www.armstat.am/am/?nid=202>]
 10. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրք, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին (ՀՕ-165-Ն): // [Hayastani Hanrapetowt'yan harkayin o'rensgirq, HH Azgayin jhoghovi koghmicy'ndownvel e' 2016 t'vakani hoktemberi 4-in (HO'-165-N)]
 11. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019 թվականի հունիսի 25-ին, ՀՕ-68-Ն: // [«Hayastani Hanrapetowt'yan harkayin o'rensgrqowm p'op'oxowt'yowwner

& Iracowmner katarelow & 2018 t'vakani hownisi 21-i «Hayastani Hanrape-towt'yan harkayin o'rensgrqowm p'op'oxowt'yownner & Iracowmner katarelow & 2017 t'vakani dektemberi 21-i «Hayastani Hanrapetowt'yan harkayin o'rens-grqowm p'op'oxowt'yownner & Iracowmner katarelow masin» HO'-266-N o'ren-qowm p'op'oxowt'yownner & Iracowmner katarelow masin» HO'-338-N o'renqowm p'op'oxowt'yown katarelow masin» HH o'renqy', HH Azgayin jhoghovi koghmic y'ndownvel e' 2019 t'vakani hownisi 25-in, HO'-68-N]

12. World Bank. 2019. Doing Business 2019 : Training for Reform. Washington, DC: World Bank. <https://openknowledge.worldbank.org/handle/10986/30438>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԲԱՇԽՄԱՆ
ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԷԼՅԱՆՈՐԱ ՆՈՐԱՅՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

Համառոտագիր: Ազգային հարստության և բնակչության եկամուտների ձևավորման ու բաշխման հարաբերությունները շատ հաճախ պայմանավորում են երկրի ներառական տնտեսական աճը: Միևնույն ժամանակ բնակչության տարբեր խմբերի միջև եկամուտների և հարստության արդարացի բաշխումը հասարակության ներսում սոցիալական համերաշխության գրավականներից մեկն է, և այս նպատակին հասնելուն են ուղղված կառավարությունների տնտեսական քաղաքականության կոնկրետ գործիքները:

Հեղինակների առաջարկությամբ ՀՀ ազգային հարստության ձևավորման և բաշխման հիմնախնդիրը պետք է դիտարկվի հետևյալ նպատակներին հասնելու տեսանկյունից. նախ՝ անհրաժեշտ է բացահայտել ազգային հարստության և բնակչության եկամուտների ձևավորման ու բաշխման միտումները ժամանակակից աշխարհում, երկրորդ փուլով՝ ուսումնասիրել ՀՀ-ում գոյություն ունեցող վիճակը և առանձնահատկությունները այս երևույթի շուրջ, այնուհետև՝ ուսումնասիրությունների վեկտորը պետք է ուղղվի արդյունավետ համակարգերի ու կառուցակարգերի մշակմանը: Հենց վերջինն էլ պետք է դառնա ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը:

Հոդվածում ուսումնասիրվել են բնակչության եկամուտների ձևավորման և բաշխման ժամանակակից միտումներն ու այդ հարաբերությունների վիճակը Հայաստանի Հանրապետությունում: Հիմնական հարցերից մեկը, որը գտնվել է հեղինակների տեսադաշտում. կարելի է արդյոք ՀՆԱ-ն ավելի արդարացի բաշխել, որպեսզի որոշակի ներդաշնակություն լինի աշխատանքի, կապիտալի

տերերի և պետության եկամուտների միջև: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ՀՀ-ում բնակչության եկամուտների բաշխումը չի նպաստել հանրության տարբեր շերտերի միջև սոցիալական համերաշխության մթնոլորտի ստեղծմանը, այլ հակառակը: Իսկ դա նշանակում է, որ ՀՀ-ում բնակչության տարբեր խմբերի եկամուտների ձևավորումը հիմնավորված չի եղել, և այն հետևանք է ՀՆԱ-ի ոչ արդարացի բաշխման:

Բնակչության եկամուտների ձևավորման ու բաշխման արդարացի համակարգի ներդրման համար կարևոր նշանակություն ունեն նաև հարկազանձումը և գույքային հարկերի ներդրումը, ինչը նույնպես դիտարկվել է հետազոտության շրջանակում:

Գիտական նորույթը.

1. բացահայտվել է ազգային հարստության ու բնակչության եկամուտների միջև փոխադարձ կապը և փոխկապակցվածությունը:
2. Ներկայացվել և գնահատվել է 1980-ական թվականների վերջի և ՀՀ երրորդ հանրապետության բնակչության ըստ եկամուտների բաշխվածությունը և ցույց է տրվել, որ երրորդ հանրապետությունում շուրջ երկու անգամ նվազել է միջին խավի տեսակարար կշիռը:
3. Ցույց է տրվել, որ պատմականորեն կարճ ժամանակահատվածում (10 տարվա ընթացքում) հնարավոր է իրականացնել ազգային հարստության այնպիսի բաշխում (հիմնականում աշխատավարձի ողջամիտ բաշխման միջոցով), որը հնարավորություն է տալիս էականորեն նվազեցնել ցածր եկամուտներ ունեցող բնակչության բաժինը՝ համապատասխանաբար ավելացնելով մյուս խմբերի մեջ մտնող բնակչության բաժինը:
4. Առաջարկվում է իրականացնել ազգային հարստության ձևավորման և բաշխման համամասնությունների վերաբերյալ հետազոտություն՝ յուրաքանչյուր փուլի համար առաջադրելով համապատասխան նպատակներ:

Բանալի բառեր՝ ազգային հարստություն, բնակչության եկամուտներ, եկամուտների բաշխում, ցածր եկամուտներ ունեցող բնակչություն, բարձր եկամուտներով բնակչություն, միջին խավ, սպառում, համախառն կուտակում, կուտակման նորմա

ВЗАИМОУСЛОВЛЕННОСТЬ ФОРМИРОВАНИЯ И РАСПРЕДЕЛЕНИЯ НАЦИОНАЛЬНОГО БОГАТСТВА И ДОХОДОВ НАСЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АШОТ ХАЧАТУРОВИЧ МАРКОСЯН

Доктор экономических наук, профессор

ЭЛЯНОРА НОРАЙРОВНА МАТЕВОСЯН

Кандидат экономических наук

Аннотация. Инклюзивный экономический рост страны очень часто обуславливается связью между формированием национального богатства страны и формированием и распределением доходов населения. В то же время справедливое распределение доходов и богатства между различными группами населения является одной из гарантий социальной солидарности в обществе, и конкретные инструменты экономической политики правительств должны быть направлены на достижение этой цели.

По мнению авторов, вопрос формирования и распределения национального богатства Республики Армения следует рассматривать с точки зрения достижения следующих целей: во-первых, необходимо выявить тенденции формирования национального богатства и распределения доходов населения в современном мире, во-вторых, изучить текущую ситуацию и особенности проявления изучаемых тенденций в Армении, а затем - направить вектор исследования на разработку эффективных систем и структур, направленных на решение задачи справедливого распределения доходов. Последнее должно стать одной из основных целей экономической политики Правительства РА.

В статье исследуются современные тенденции формирования и распределения доходов населения и состояние этих отношений в Республике Армения. Один из основных вопросов, который находился в поле зрения авторов – возможность более справедливого распределения ВВП таким образом, чтобы установилась определенная справедливость распределения доходов между собственниками труда, капитала и доходами государства. Результаты исследования показали, что распределение доходов населения в Армении не способствовало созданию атмосферы социальной солидарности между различными слоями общества, а наоборот. А это означает, что формирование доходов разных групп населения в Армении было необоснованным и является следствием несправедливого распределения ВВП страны.

Налогообложение, и в частности введение налогов на имущество, также важны для внедрения справедливой системы образования и распределения доходов населения, и данной проблеме также уделено внимание авторов исследования.

Научная новизна:

1. выявлена взаимосвязь и обусловленность между национальным богатством и доходами населения.

2. Представлена оценка распределения доходов населения в Республике Армения в конце 1980-х годов, а также во времена третьей республики, и показано что доля среднего класса в настоящее время уменьшилась почти вдвое.
3. Показано, что за исторически короткий период времени (в течение 10 лет) возможно произвести такое распределение национального богатства (в основном за счет разумного распределения заработной платы), которое позволяет значительно снизить долю населения с низкими доходами и, соответственно, увеличить долю населения, входящую в другие группы по доходам.
4. Предлагается провести исследование пропорций формирования и распределения национального богатства, определив соответствующие цели для каждого этапа.

Ключевые слова: национальное богатство, доходы населения, распределение доходов, население с низкими доходами, население с высокими доходами, средний класс, потребление, валовое накопление, норма накопления

INTERCONDITIONALITY OF FORMATION AND DISTRIBUTION OF NATIONAL WEALTH AND INCOME OF THE POPULATION OF THE REPUBLIC OF ARMENIA

ASHOT KHACHATUR MARKOSYAN

Doctor of Sciences (Economics), Professor

ELYANORA NORAYR MATEVOSYAN

Ph.D. in Economics

Abstract. The inclusive economic growth of a country is very often interdependent on the relationship between the formation of the country's national wealth and the formation and distribution of the population's income. At the same time, a fair distribution of income and wealth between different groups of the population is one of the guarantees of social solidarity in society, and specific instruments of economic policy of governments should be aimed at achieving this goal.

According to the author's vision, the issue of the formation and distribution of the national wealth of the Republic of Armenia should be considered from the point of view of achieving the following goals. Firstly, it is necessary to identify trends in the formation of national wealth and the distribution of incomes of the population in the modern world; and secondly, to study the current situation and features of the manifestation of the trends under study in Armenia, and then to direct the research vector towards the development of effective systems and structures aimed at solving the problem fair distribution of income. The latter should become one of the main goals of the economic policy of the RA Government.

The article examines the current trends in the formation and distribution of

incomes of the population and the state of these relations in the Republic of Armenia. One of the main issues that were in the field of view of the authors was the possibility of a more equitable distribution of GDP, so that a certain fairness of the distribution of income between the owners of labor, capital and the state's income was established. The results of the study showed that the distribution of incomes of the population in Armenia did not contribute to the creation of an atmosphere of social solidarity between different groups of society, but on the contrary. This means that the formation of incomes of different groups of the population in Armenia was unjustified and is a consequence of the unfair distribution of the country's GDP.

Taxation, and in particular the introduction of taxes on property, is also important for the implementation of a fair system of formation and distribution of income of the population, and this issue is also given the attention of the authors of the study.

Scientific novelty:

1. The relationship and interdependence between national wealth and incomes of the population was revealed.
2. An assessment of the distribution of incomes of the population in the Republic of Armenia in the late 1980s, as well as during the times of the third republic, is presented, and it is shown that the share of the middle class in the current period has almost halved.
3. It is shown that in a historically short period of time (within 10 years) it is possible to produce such a distribution of national wealth (mainly due to a reasonable distribution of wages), which can significantly reduce the share of the population with low incomes and, accordingly, increase the share of the population, included in other income groups.
4. It is proposed to conduct a study of the proportions of the formation and distribution of national wealth, defining the appropriate goals for each stage.

Keywords: national wealth, population income, income distribution, low-income population, high-income population, middle class, consumption, gross capital formation, rate of accumulation